

**Կենսաբանություն, I ՓՈՒԼ  
տևողությունը 60 րոպե  
9-րդ դասարան**

**Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**

Յուրաքանչյուր թեստում առաջարկվում է 4 պատասխան: Ընտրեք միայն մեկը, որը, ըստ Ձեզ, առավել ճիշտ է և ամբողջական:

**1. Օադկավոր բույսի բեղմնավորված ձվաբջիջը զարգանում է**

- 1) սերմնարանում
- 2) փոշանոթում
- 3) էնդոսպերմում
- 4) շաքիլներում

**2. Պտերների սեռական բազմացման օրգաններն են.**

- 1) Սպորանգիումները սպորներով
- 2) Նախածիլը
- 3) Սպորոֆիտը
- 4) Անթերիդիումները և արքեգոնիումները

**3. Կանաչ ջրիմուռները կարող են բազմանալ.**

- 1) սեռական ճանապարհով
- 2) սպորներով
- 3) թալոմի ֆրագմենտացիայով
- 4) բոլոր պատասխանները ճիշտ են

**4. Սոճու սպորոֆիտ է հանդիսանում.**

- 1) Փոշեհատիկը
- 2) Ծառը
- 3) Սերմը
- 4) Կոնը

**5. Ստորև բերված կենդանիների խմբերից անսեռ բազմացման ունակությունը պահպանել են.**

- 1) Երկկենցաղները
- 2) Ադելֆորշավորները
- 3) Միջատները
- 4) Խեցգետնակերպերը

**6. . Օղակավոր որդերի մարմնի խտուչը.**

- 1) առաջնային է
- 2) երկրորդային է
- 3) խառն է
- 4) բացակայում է՝ օրգանների միջև ընկած տարածությունը լցված է պարենքիմային բջիջներով

**7. Որտեղի՞ց են ի հայտ գալիս հիդրայի խայթող նոր բջիջները.**

- 1) խայթող բջիջները կիսվում են
- 2) խայթող բջիջները առաջանում են միջանկյալ բջիջներից
- 3) խայթող բջիջները առաջանում են մաշկամկանային բջիջներից
- 4) խայթող բջիջները չեն վերականգնվում՝ հիդրան սատկում է, երբ նրանց պաշարը վերջանում է:

**8. Ձկներին, որոնք մշտապես ապրում են գետերում, անվանում են**

- 1) կիսաանցողիկ ձկներ
- 2) անցողիկ ձկներ
- 3) նստակյաց ձկներ
- 4) քաղցրահամ ջրերի ձկներ

**9. Մարդու մարտդակյան համակարգի ո՞ր օրգանով մարավող սնունդը չի անցնում.**

- 1) տասներկուամտնյա աղիով
- 2) հաստ աղիով
- 3) ըմպանով
- 4) լյարդով

10. Էմբրիոնալ զարգացման ո՞ր փուլն է, որ բնորոշ է միայն քորդավորներին.

- 1) բլաստուլա
- 2) գաստրուլա
- 3) մորուլա
- 4) նեյրուլա

11. Դիֆտերիայի հարուցիչները

- 1) սապրոֆիտներ են
- 2) մակաբույծներ են
- 3) սիմբիոնտներ են
- 4) ավտոտրոֆներ են

12. Ո՞ր բակտերիաներն են կենսագործունեության համար օգտագործում անօրգանական միացությունների քիմիական կապերի էներգիան

- 1) մակաբույծ
- 2) սապրոտրոֆ
- 3) ֆոտոտրոֆ
- 4) քեմոտրոֆ

13. Արհեստական շնչառություն իրականացնելիս հաջողության նշաններից մեկն է տուժածի.

- 1) մարմնի ջերմաստիճանի բարձրացումը
- 2) արյան ճնշման նվազումը
- 3) բիբերի նեղացումը
- 4) բիբերի լայնացումը

14. Ինչի պակաս են զգում մարդու մարմնի հյուսվածքները սակավարյունության դեպքում.

- 1) թթվածնի
- 2) սննդարար նյութերի
- 3) ջրի և հանքային աղերի
- 4) բոլոր թվարկած նյութերի

15. Հորմոններին է դասվում.

- 1) պեպսինը
- 2) ամիլազը
- 3) հեմոգլոբինը
- 4) ինսուլինը

**Կարճ պատասխանով առաջադրանքներ**

16. Արյան խմբի ձևավորման համար պատասխանատու մեկ գենի քանի՞ ալել է պարունակվում մարդու գամետում (նորմայում):

17. Քանի՞ քրոմոսոմ է լինում մարդու սոմատիկ բջիջներում միտոզից հետո:

18. Քանի՞ տեսակի փոշեհատիկ է առաջանում փոշեանոթում, եթե սոմատիկ բջիջը պարունակում էր 4 զույգ քրոմոսոմ:

19. Հնդկաքաղաղը ունի 82 քրոմոսոմ: Քանի՞ քրոմոսոմ ունի պարթենոգենետիկ հնդկաքաղաղը:

20. Ռիբոնուկլեազ ֆերմենտը կազմված է 124 ամինաթթվային մնացորդից: Քանի՞ պեպտիդային կապ է առաջացել այդ ֆերմենտի առաջնային կառուցվածքը ստանալիս: